[

«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - *Բազմիմաստ և հարանուն դարձվածքները ժամանակակից հայերենում*

ԱՌԱՐԿԱ - Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ - Անահիտ Մկրտչյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - Սևանի Խ.Աբովյանի անվան ավագ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Մաս 1-ին – Բազմիմաստության դրսևորումը դարձվածքներում:

Բազմիմաստ դարձվածքների առաջացման ուղիները:_____3

Մաս 2-րդ – Հարանուն դարձվածքների առաջացման ուղիները: _____11

Եզրակացություն_____17

Օգտագործված գրականության ցանկ _____18

Ներածություն

Աշխատանքում քննության ենք առել ժամանակակից արևելահայերենի դարձվածքները՝ մասնավորապես ուսումնասիրության նյութ դարձնելով դրանց իմաստային առանձնահատկությունները, ինչպես նաև ձևային և իմաստային առնչությունների խնդիրը: Դարձվածքների մի մեծ խմբի հատուկ է **բազմիմաստությունը,** որը կարող է դրսևորվել ամենատարբեր հանգամանքներով: Դարձվածքները այսօր էլ շարունակում են ձեռք բերել նոր իմաստներ՝ պայմանավորված նոր կիրառություններով, նոր վերաիմաստավորումներով: Այդ նոր իմաստները դրսևորվում են հատկապես խոսակցական լեզվում, որտեղ դարձվածքները հաճախակի կիրառություն ունեցող միավորներ են:

Դարձվածքային **հարանունությունը** հիմնականում ձևավորվում է հոդերի, վերջավորությունների կամ ածանցների միջոցով, իսկ իմաստային առումով այդ դարձվածները իրարից բոլորովին տարբեր և ինքնուրույն դրսևորումներ ունեն:

Բազմիմաստության դրսևորումը դարձվածքներում: Բազմիմաստ դարձվածքների առաջացման ուղիները:

Հայերենի անսպառ արտահայտչական հնարավորությունների շարքում իրենց առանձնահատուկ տեղն ու դերն ունեն դարձվածքները, որովհետև խոսքի գեղեցկության համար կարևոր նշանակություն ունեն ոչ միայն խոսքի մաքրությունը, այլ նաև նրա հարստությունն ու պատկերավորությունը, իսկ հնամյա մեր լեզուն ունի այնքան հարուստ բառագանձ, բառարմատներ ու բառաձևեր, բազմազան բառակապակցություններ և այլն, որոնք լայն հնարավորություն են ստեղծում պատկերավոր ներկայացնելու ցանկացած երևույթ, իրադարձություն, հոգեկան ապրումներ ու հասարակական տարբեր հարաբերություններ: Աշակերտներին սովորեցնելով դարձվածքները կիրառել իրենց խոսքում՝ նրանց մեջ ձևավորում ենք ասելիքն առավել տպավորիչ և պատկերավոր ձևակերպելու և ներկայացնելու

կարողություն: Դարձվածքների կիրառումը խոսքում օգնում է լիովին խոսակցին փոխանցել մեր հույզերն ու ապրումները: Դպրոցում դարձվածքների ուսուցումը գերազանցապես նպատակ ունի հարստացնելու աշակերտների բառապաշարը պատկերավոր արտահայտչամիջոցներով, ինչպես նաև, ծանոթացնելով դարձվածքների առաջացման պատմությանը, սովորողներին տեղեկություններ հաղորդելու հայերենի բարբառների, ժողովրդական բանահյուսության, ավանդույթների, առասպելների վերաբերյալ: Դարձվածքները ժողովրդական մտածողության արդյունք են ու թեև առաջացել են խոսակցական լեզվում, սակայն ներթափանցել են գրական լեզու՝ հարստացնելով այն պատկերավոր խոսքի միավորներով: Դարձվածքների առաջացման հիմքում մարդու կենսափորձն է, կենսափիլիսոփայությունը, բնության երևույթների ճանաչումն ու կենդանիների վարքագծին տեղյակ լինելը: Հարստացնելով գրական լեզվի բառապաշարը՝ դարձվածքները խոսքը զերծ են պահում միապաղաղությունից ու չորությունից. դրանց կիրառմամբ յուրացվում են ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ եղանակները: Հայերենի դարձվածաբանությունը քննության են ենթարկել Ա. Մուրվայանը, Վ. Քոսյանը, Ա.Սուքիասյանը, Պ. Բեդիրյանը, Ե. Գևորգյանը և այլք: Հայ քերականագետներից Ալ. Մարգարյանը, գրում է. «Դարձվածքի ամեն մի իմաստ ստեղծվում ու զարգանում է ինքնուրույնաբար, այսինքն՝ մեկ իմաստից ոչ թե մեկ այլ իմաստ, այլ նուն հիմքից տարբեր զուգորդումներով տարբեր իմաստներ են ծնվում»[1]: Բառերը ի զորու են անընդհատ հարստանալու նոր իմաստներով, մինչդեռ դարձվածքները չեն կարող պատահական կիրառությունների շնորհիվ նոր իմաստներ ձեռք բերել, այդ պատճառով էլ բազմիմաստ դարձվածքների թիվն անհամեմատ ավել քիչ է, քան բազմիմաստ բառերինը: Դարձվածքի եղած իմաստին նոր իմաստների հավելումը տեղի չի ունենում միանգամից: Նոր իմաստի հաստատման համար անհրաժեշտ է, որ դարձվածքը տվյալ իմաստով բազմիցս կիրառվի, հետևաբար այդ իմաստը ընկալելի լինի բոլոր լեզվակիրների համար: Բայց որքան էլ որ անհրաժեշտ է

[1] Տե՛ս **Մարգարյան Ալ.**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 334:

տևական ժամանակաշրջան, որպեսզի դարձվածքները ձեռք բերեն նոր իմաստներ, այնուամենայնիվ այդ նոր իմաստների հավելումը հնարավոր է նաև համեմատաբար կարճ ժամանակամիջոցում:

Այսպես, **կես մարդ դառնալ** դարձվածքը բոլոր բառարաններում տրվում է մեկ իմաստով՝ *տանջվել, հոգեկան ծանր ապրումներ ունենալ,* սակայն վերջին ժամանակներում այն օգտագործվում է նաև մի նոր իմաստով՝ *առողջական և ֆիզիկական վատ վիճակում լինել,* օրինակ՝ *Երկարատև հիվանդությունից կես մարդ էր դարձել:* **Իրար հասնել** դարձվածքը բառարաններում տրվում է հետևյալ իմաստներով՝ ա) իրար վրա հարձակվել, կռվել, բ) օգնել, օգնության հասնել, սակայն ժամանակակից հայերենում այս դարձվածքը ձեռք է բերել նաև բոլորովին տարբերվող մի իմաստ՝ *սիրահարների նպատակը իրականանալ, ամուսնանալ կամ միասին լինել,* օրինակ՝ *Ծնողների կամքին հակառակ՝ սիրահարները հասան իրար*: **Ձեռք գցել** դարձվածքը ունի մի քանի հիմնական իմաստներ՝ *նվաճել, տիրանալ, գրավել,* բայց այդ իմաստներին ժամանակակից հայերենում ավելացել է ևս մեկը՝ *օգնել, սատար կանգնել,* օրինակ՝ *Չեմ աշխատում, բայց բարեկամներս* ***ձեռք գցում,*** *օգնում են*: **Ձեռքերը լվանալ** - 1) չխառնվել որևէ գործի. 2) վատ բան կատարելով մի կողմ քաշվել, չքմեղ ձևանալ. 3) պատասխանատվությունն իր վրայից գցել: **Քթի տակ** - 1) շատ մոտ (տեղով և ժամանակով). 2) անլսելի, հազիվ լսելի. 3)աննկատելի, հազիվ նկատելի. 4) մեկի գիտությամբ, թողտվությամբ. 5) ակնբախ կերպով, բացահայտորեն. 6) հեգնանքով, քամահրանքով: **Աչքը բանալ** (բացել, բաց անել) - 1) քնից արթնանալ, զարթնել. 2) հանկարծ իրեն տեսնել, ուշքի գալ, սթափվել. 3) ծնվել, ծնունդ առնել. 4)գիտակցության գալ, չարն ու բարին հասկանալ. 5) կյանք մտնել, կյանքը ճանաչել. 6) գլխի գցել, հասկացնել, խելամուտ դարձնել. 7) զգաստանալ, խելքը գլուխը հավաքել, ուշադիր՝ աչալուրջ լինել. 8) դուրս գալ, ծագել:

Ինչպես արդեն նշել ենք, դարձվածքներին բնորոշ չէ բազմիմաստությունը այնպես, ինչպես բառերին, և բոլոր դարձվածքները չէ, որ ունեն բազմիմաստ

դառնալու նույն հնարավորությունները: Դա մեծապես կախված է այն բանից, թե ինչ հարաբերություններով են կապված դարձվածքների բառ-բաղադրիչները, և թե դրանցից յուրաքանչյուրը որքանով է պահպանում իմաստային անկախությունը դարձվածքի կազմում:

Լեզվաբան Աշոտ Սուքիասյանը, դարձվածքները դասակարգելով ըստ բաղադրիչների իմաստային միաձուլության աստիճանի, հիմնականում առանձնացնում է չորս խումբ՝ *դարձվածքային սերտաճումներ, միասնություններ, կապակցություններ, արտահայտություններ*: Ամենապարզ ուսումնասիրությունն էլ ցույց է տալիս, որ դրանցից *դարձվածքային սերտաճումները* բազմիմաստ դառնալու ամենաքիչ հնարավորությունները ունեն, քանի որ դրանցում բաղադրիչները կորցնում են իրենց անկախ իմաստը, բոլորը միասին վերաիմաստավորվում են՝ ստեղծելով մեկ ընդհանուր իմաստ, օրինակ՝ **մածուն չի, որ բրդես**՝ հեշտ բան չէ, **մազը մազին**՝ լիովին, ճիշտ ու ճիշտ, **հարսանիք չես գնում**՝ դժվար, վտանգավոր տեղ, **լծին մոտ չգալ**՝ աշխատանքից խույս տալ, **երես ծռել**՝ մի խնդրանքով մեկին անընդհատ դիմել, **հաշվին գալ**՝ ձեռնտու լինել և այլն:

Մենիմաստությամբ բնորոշվում են նաև առած-ասացվածքները, ու դրանք ինչքան էլ բնութագրվեն իբրև իրենց բաղադրիչների իմաստներով պայմանավորված միավորներ, այնուամենայնիվ դրանցից շատերի նշանակությունները չեն էլ կապվում բառ-բաղադրիչների իմաստների հետ, ու դա էլ իր չափով նպաստում է, որ առածներն ու ասացվածքները ստեղծվեն ու մնան իբրև մենիմաստ դարձվածքներ, օրինակ՝ **անձևից փախա, կարկուտի հանդիպեցի** ՝ վատից վատ, **իր աչքի գերանը թողած՝ ուրիշի չոփն է ման գալիս**՝ սեփական արատի անտեսում, **մարդու աչքը մի բուռ հողով է կշտանում**՝ մահվանից հետո, **գդակը՝ մեծ, տակը դատարկ**՝ մեծախոս, **էշը կորցրել են, փալանն են ման գալիս**՝ երկրորդականի հետրից ընկնել, **առաջ՝ մորթուս, հետո՝ որդուս**՝ եսասեր:

Իսկ դարձվածքային կապակցությունները, որոնց բաղադրիչների իմաստային անկախությունը որոշ չափով պահպանված է, և որոնց ընդհանուր իմաստները որոշակիորեն բխում են իրենց կազմում եղած բաղադրիչների իմաստներից, բազմիմաստ դառնալու մեծ պոտենցիալ ունեն: Դա հատկապես պայմանավորված է այն բանով, որ բաղադրիչները, լինելով առավել անկախ իրենց արտահայտած իմաստով, հնարավորություն են ստանում իմաստային նոր նրբերանգներով հանդես գալու: Արդյունքում ունենք այն, որ ժամանակակից հայերենում բազմիմաստությամբ աչքի են ընկնում հատկապես նմանատիպ դարձվածքները, օրինակ՝ **գլուխը կախել՝** ա)սուսուփուս կեցվածք ձեռք բերել, բ) մտահոգված կեցվածք ստանալ, գ)ամաչել, **ցեխը կոխել՝** ա) խայտառակել, բ) պատիվը գցել, գ) անպատվել, **բերանը բաց** ՝ա) ապշահար, բ) անտարբերությամբ, գ) չտեսի պես, **լեզուն կծել՝** ա) խոսքը զսպել, բ)մտածմունքի մեջ ընկնել և այլն:

Դարձվածքներին բազմիմաստություն վերագրելը՝ միայն ըստ դրանց բաղադրիչների իմաստային սերտության աստիճանի, չի տա երևույթի ամբողջական պատկերը, քանի որ նոր իմաստների առաջացմանը նպաստում են նաև դարձվածքների գործածման մեծ հաճախականությունը, մարդկային մտքի՝ երևույթներն անընդհատ համեմատելու ու պատկերավոր խոսք ստեղծելու գործընթացը և այլն: Բազմիմաստ դարձվածքների առաջացման գործոններից մեկն էլ **փոխաբերությունն է**, որը կարող է նոր իմաստներ աստեղծել ամենատարբեր նմանությունների հիման վրա. «Փոխաբերություններ կազմելու միջոցները այնքան բազմաթիվ ու բազմատեսակ են, որ հնարավոր չէ դրանք խմբավորել մեկ անվան տակ: Երբեմն փոխաբերության հիմք ծառայող առարկան կամ երևույթը կարող է իրականության մեջ գոյություն չունենալ: Նման դեպքերում ժողովուրդը գործադրում է իր մտքի երևակայության ուժը՝ կատարելով նմանեցումներ: Դրանց միջոցով կազմված փոխաբերությունները բավական մեծ թիվ են կազմում, ինչպես **լուն ուղտ շինել** (բանը

չափազանցնել), **սատանայի հետ ծնված** (շատ տգեղ)»[2]: Փաստորեն, մարդկային միտքը ընդունակ է նաև առարկաների կամ երևույթների նմանության հիման վրա դարձվածքներին ոչ թե մեկ, այլ նույնիսկ մի քանի իմաստներ հաղորդել: Այսպես, բերենք գործողության նմանության հիման վրա ստեղծված դարձվածքների օրինակներ.

Ծնկի բերել դարձվածքն ունի երեք հիմնական իմաստ՝ *մեկին ստիպել, որ խոնարհվի,* ապա նաև՝ *ընկճել, ստիպել անձնատուր լինել,* նաև՝ *հաղթել*: Պարզ է, որ այս իմաստներն առաջացել են այն հիմքով, որ ընդհանրապես մեկին երբ հաղթում են կամ ստիպում են դիմացինին իր մեղքերի համար պատասխան տալ, ստիպում են, որ ծնկի գա: **Կաշին քերթել՝** ա) ծեծել, պատժել, բ) բռնություն գործադրել, գ) դաժանորեն կեղեքել: Այս իմաստները առաջացել են առաջին հերթին իրականության հիմքով, քանի որ հնում որպես պատիժ կիրառվել է նաև մարդկանց մաշկը քերթելը, տիկ հանելը: **Կրակին ջուր լցնել** դարձվածքի դիմաց բառարաններում նշվում են հետևյալ իմաստները՝ ա)*հաջող ընթացքին խանգարել,* բ) *բորբոքված հույզերը մարել:* Երկու իմաստներն էլ ունեն իրենց պատճառաբանվածությունը, քանի որ իրականում էլ թեժացած կրակին ջուր լցնելը կնշանակի հանգցնել, մարել. համեմատությունն այնքան պարզ է, որ միանգամից հասկանալի կարող է լինել, թե ինչ իմաստներով է գործածվում այս դարձվածքը: Սրա նման է նաև **սառույցը հալվել** դարձվածքը, որը նույն սկզբունքով է ձեռք բերել նոր իմաստներ (բնության երևույթի համեմատությունը մարդկային հարաբերությունների հետ)՝ա)*տնական լարված հարաբերությունները փոխվել,* բ)*տհաճ վիճակին վերջ տալ, իրադրություն փոխել:* **Շեշտը մի բանի վրա դնել՝** ա)*ուշադրությունը մի բանի վրա կենտրոնացնել,* բ)*ընդգծել, կարևորել,* դարձվածքի իմաստներն էլ կարող ենք բացատրել նրանով, որ գրավոր ու բանավոր խոսքում շեշտը դրվում է այն բառերի վրա, որոնցով արտահայտվում է ասվածի հիմնական իմաստը, հետևաբար *շեշտը դնելը* կնշանակի՝ կարևոր համարել, շեշտել մի բան:

[2] Տե՛ս **Գևորգյան Ե.**,Հայերենի դարձվածքները, Երևան , 1969, էջ 48:

Հետաքրքիրն այն է, որ, ինչպես երևում է բերված օրինակներից, նշված առանձնահատկությամբ հիմնականում դարձվածքային կապակցություններն են աչքի ընկնում, որոնք, ինչպես նշել ենք, մյուս դարձվածքների համեմատ ավելի շատ հնարավորություն ունեն բազմիմաստ դառնալու: Քիչ չեն նաև փոխաբերությունները, որոնք առաջացել են **կենդանիներին բնորոշ հատկանիշների** հիման վրա, օրինակ՝ **էշի պես՝** ա) անհասկացող, անտաշ, բ) անտարբեր, **օձի լեզու՝** ա) խայթող, չար խոսք ունեցող մարդ, բ)խորամանկ մարդ, **անլեզու անասուն՝** ա) հնազանդ, բ)տգետ, անկիրթ, **առյուծ կտրել՝** ա) քաջ դառնալ, իրեն քաջի կեցվածք տալ, բ) գազազել, կատաղել, **Աստծո գառ՝** ա) մաքուր, անարատ մարդ, բ) լսող, հնազանդվող մարդ:

Արդեն պարզ է դառնում, որ սրանց իմաստները առաջացել են կենդանիներին բնորոշ հատկանիշների հիման վրա, քանի որ մարդկային պատկերացումներում դրանցից յուրաքանչյուրին բնորոշ են զանազան հատկություններ, օրինակ՝ էշի անհնազանդ լինելը, օձի թունավոր, վտանգավոր լեզու ունենալը, առյուծի հզոր, ուժեղ լինելը, գառի անմեղ լինելը, որին նույնիսկ մարդիկ հնուց ի վեր զոհաբերում են Աստծուն, քանի որ հնազանդվող է, այս հատկանիշները չէին կարող վրիպել ժողովրդի աչքից:

Իհարկե, լեզվի արդի փուլում գործող բազմաթիվ դարձվածքներ հիմնված են **տարբեր առարկաների, հատկանիշների ու մարդուն բնորոշ գծերի նմանությունների վրա:** Այսպես, **սարի պես կանգնել** դարձվածքի իմաստները՝ ա) *հաղթական տեսք ընդունել, բ) խրոխտ, հաղթական տեսք ունենալ, գ) առնական լինել,* առաջացել են սարի ունեցած բարձր, սլացիկ տեսքի նմանությամբ, **ռումբի պես պայթել** դարձվածքի իմաստները՝ ա) *անակնկալ լինել, բ) ցնցող նորություն լինել, գ) պոռթկալ*, կարելի է բացատրել նրանով, որ ինչպես ռումբն է պայթում՝ անակնկալի բերելով բոլորին, այնպես էլ կարող է լինել անսպասելի լուրը կամ համբերատար մարդու բարկության պոռթկումը, **շաքարի պես** դարձվածքի իմաստները՝ ա) *բարի, բ) մեղմաբարո*, կապվում են դրա քաղցր և դյուրահալ լինելու հատկությունների հետ: Ի վերջո,

փոխաբերությունը, օրինակ՝ **վարդագույն ակնոցով** դարձվածքի իմաստները՝ ա) լավատեսորեն, բ) թերությունները չներկայացնելով, *վարդագույն* բառի հիման վրա են առաջացել, քանի որ մարդկային գիտակցության մեջ վարդագույնը լավատեսության, երազկոտության հետ է կապվում, իսկ **սև ակնոցով** դարձվածքը, պարզ է, ունի ճիշտ հակառակ իմաստները՝ ա) հոռետեսորեն, վատատեսորեն, բ) միայն թերությունները նկատելով, ընդգծելով, քանի որ սևն էլ նույնացվում է վատի, տխրության, մռայլության հետ: **Երկաթյա բռունցք** դարձվածքն էլ ունի հետևյալ իմաստները՝ ա) *ուժեղ իշխանություն, կոպիտ ղեկավարություն, բ) կարծր միջոցներ*, և *երկաթյա* ածականի փոխաբերական իմաստը այս դեպքում կոպտությունն է, ճնշումը, քանի որ երկաթն ամուր, դժվարահալ է :

Փոխաբերությունից պակաս, սակայն բազմիմաստության առաջացմանը նպաստող միջոցներից է նաև **փոխանունությունը**, այսինքն երբ մարմնի առանձին մասերի անուններով կազմված դարձվածքները բնութագրում են ընդհանրապես մարդուն՝ իր բնավորության այս կամ այն գծով, օրինակ՝ **քթի մազ՝** ա) բծախնդիր, բ) անախորժ, տհաճ, **բաց բերան՝** ա) շատախոս, բ) ոչ գաղտնապահ, **փափուկ սիրտ՝** ա) խղճով, դյուրազգաց, բ) մեղմ բնավորության տեր, **բաց սիրտ՝** ա) անկեղծ, բ) առաաձեռն, գ) հյուրասեր, **ականջը կախ՝** ա) խոնարհ, բ) լուռ, գ) հանդարտ, ոչ կռվարար, **ծանր գլուխ՝** ա) ծանրախոհ, լրջմիտ, բ) մտածմունքներով ծանրաբեռնված, գ) շարժումների մեջ ծանր:

Առանձին խումբ են կազմում այն դարձվածքները, որոնք իրենց կազմությամբ և իմաստով համազոր են նախադասությանը: Տրամաբանորեն դատողություն, շարահյուսորեն նախադասություն ներկայացնող այդ կարգի դարձվածքների իմաստը փոխաբերական է, պայմանավորված չէ նախադասության կազմի մեջ մտնող բառերի բառային իմաստներով, այդ բառերի բառային իմաստների սոսկ գումարը չէ և չի բխում դրանց ընդունված, գործածական իմաստներից: Օրինակ՝ **այսօր կա՝ վաղը չկա** - 1) ծերացել է, մահը հեռու չէ. 2) մեռնելու ենթակա է, մահկանացու է. 3) անցողիկ,

ժամանակավոր է։ **Ի՜նչ եմ ասել** - շատ լավն է (հիացական և զարմացական արտահայտություն)։ **Ասեղ գցես՝ գետին չի ընկնի** - շատ մարդ կա, հոծ բազմություն է։ **Աստված գիտե** - հայտնի չէ, անհայտ է, ո՞վ գիտե։

Բազմիմաստությունը անմիջականորեն կապվում է համանունության հետ։ Դարձվածքային համանունությունը քանակապես խիստ սահմանափակ է և տարածվում է սահմանափակ թվով դարձվածքների վրա։ Դարձվածքային համանունության առաջացման համար էական նշանակություն կարող են ունենալ նաև դարձվածքի բաղադրիչների կամ բաղադրիչներից մեկի իմաստային, ինչպես նաև բաղադրիչների շարահյուսական –գործառական տարբերությունները, որոնց շնորհիվ նույն բաղադրակազմն ունեցող դարձվածքային միավորները ձեռք են բերում տրամաբանորեն և ծագումնաբանորեն իրար հետ չառնչվող իմաստներ, հետևաբար և գիտակցվում են իբրև ձևով նույն, բայց բովանդակությամբ տարբեր դարձվածքներ։ Օրինակ՝

1. **Հացը կտրել** - մեկին սեղանակից լինել, հյուրասիրվել մեկի կողմից
2. **Հացը կտրել**- մեկին ապրուստից զրկել, մեկի ապրուստի միջոցը խլել

   կամ

1. **Աչքերը փակել** - մեռնել.
2. **Աչքերը փակել** - մեկին խաբել, մոլորեցնել, մոլորության մեջ գցել.
3. **Աչքերը փակել** - չնկատելու տալ, ուշադրություն չդարձնել։

Հարանուն դարձվածքների առաջացման ուղիները

Խ. Բաղիկյանը հարանուն դարձվածքներ է դիտարկում դարձվածքային այն միավորները, որոնք մոտ են իրենց կազմով, բայց ոչ ամբողջովին նույնը, և դրանք հատկապես տարբերվում են հոդ ունենալու և չունենալու հատկանիշով. «Դարձվածքային բազմիմաստության մեջ մենք դարձվածքային համանուններ ենք

դիտում նաև միևնույն կառույցի անհոդ (*կյանք տալ*՝ կենդանություն պարգևել, ծնել, աշխարհ բերել) և հոդով (*կյանքը տալ*՝ մեռնել, կյանքը զոհաբերել որևէ բանի կամ որևէ մեկի համար) ոճական կիրառությունները, որոնք բոլորովին տարբեր, ավելի հաճախ՝ հակադիր իմաստներ են արտահայտում»[3]: Նշենք, որ այս դարձվածքները իրենց տարբեր իմաստները ձեռք են բերում հոդերի շնորհիվ, և հենց այդ հոդն էլ պատճառ է դառնում տվյալ դարձվածքների անփոխարինելիության: Նման դարձվածքները Ալ. Մարգարյանը համարում է հարանուններ և նշում է, որ դրանք կառուցվածքով շատ մոտ են, իսկ իմաստով՝ մոտ, առնչակցվող[4] : Բայց այդ դարձվածքները հաճախ բոլորովին տարբեր իմաստներ են ձեռք բերում հոդերի շնորհիվ: Հարանուն դարձվածքները կազմվում են նույն արմատներով, ավելի կոնկրետ՝ նույն բաղադրիչներով, միայն թե դրանց գրային և արտասանական տարբերությունները ապահովում են համապատասխան հոդերը, ածանցները և վերջավորությունները, այսինքն՝ դրանցով ապահովվում է հարանուն զույգերի ստեղծման համար կարևոր նախադրյալը՝ գրության և արտասանության սերտություն, իսկ իմաստային կողմի տարբերությունները կամ հեռավոր նմանությունները ստեղծվում են շնորհիվ դարձվածքի բնորոշ հատկանիշի՝ փոխաբերության, քանի որ դարձվածքի կազմի մեջ մտնելով՝ միևնույն բառը կարող է ստանալ իմաստային զանազան նրբերանգներ:

Ա) Հոդով ձևավորվող հարանուն դարձվածքներ: Ժամանակակից հայերենում հարանուն դարձվածքների ամենամեծ խումբը կազմում են հենց այս հատկանիշով առանձնացող դարձվածքները: Սակայն պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք. ոչ բոլոր դարձվածքների դեպքում է, որ հոդի ավելացումը փոխում է դարձվածքի իմաստը, իսկ դա արդեն նշանակում է, որ այս դարձվածքները ոչ թե հարանուններ են, այլ պարզապես տարբերակային ձևեր են, օրինակ՝ *աչք դնել – աչքը դնել, ականջ լցնել – ականջը լցնել, սիրտ կոտրել – սիրտը կոտրել, վերջակետ դնել–*

[3] Տե՛ս **Բաղիկյան Խ.**.,Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000, էջ 74:
[4] Տե՛ս **Մարգարյան Ալ.**, նշվ. աշխ., էջ 342:

վերջակետը դնել, հոգեվարք ապրել – հոգեվարքն ապրել, ձայն բարձրացնել – ձայնը բարձրացնել: Իսկ ինչ վերաբերում է բուն հարանուններին, ապա դրանք ժամանակակից հայերենում քիչ թիվ չեն կազմում, օրինակ՝ **գլուխ պահել** (ինչ-որ բանից խուսափել, ծուլանալ) // **գլուխը պահել** (գոյությունը պահպանել, ապրուստը հոգալ: Ապրում էր միայն իր *գլուխը պահելով՝ չցանկանալով լսել որևէ բարի խորհուրդ:*): **Ձեռ(ք) առնել** (մեկին ծաղրել, վրան ծիծաղել) // **ձեռքը առնել** (իր բռի մեջ հավաքել, մի բան իր տնօրինության տակ վերցնել) - Կատակելով, իրար *ձեռք առնելով՝* ամեն մեկը փորձում էր թաքցնել հոգու խռովքը: **Ձեռ(ք) տալ** (շահավետ լինել) // **ձեռքը տալ**, (հանձնել, տրամադրել, բռնել տալ) - Գուցե գրավն այնքան մեծ է, որ մարդուն *ձեռք է տալիս* բանտ նստել ու չվճարել: **Գլուխ դնել** (մեկի հետ երկար խոսել, վիճել, լսել, ինչ-որ բանի հետ երկար շփում ունենալ) // **գլուխը դնել** (իրեն զոհաբերել, մահանալ): Այսպիսի հարանուն դարձվածները բավականին շատ են, թվենք մի քանիսը՝ **սիրտ առնել** (համարձակություն, քաջություն ձեռք բերել)// **սիրտը առնել** (սիրաշահել, մխիթարել)// **սիրտը առնել** (վիրավորել, նեղացնել), **անուն հանել** (մեծ հեղինակության հասնել) // **անունը հանել** (մեկի համբավը տարածել լավ կամ վատ իմաստով), **հոգի առնել** (կենդանություն ստանալ) // **հոգին առնել** (սպանել, խիստ տանջել), **կյանք տալ** (կենդանություն պարգևել, ծնել) // **կյանքը տալ** (իրեն զոհաբերել, նաև՝ մեկի համար ոչինչ չխնայել), **շունչ տալ** - ա) կենդանություն պարգևել, վերակենդանացնել, բ) ոգեշնչել) // **շունչը տալ** (մեռնել, իրեն զոհաբերել), **փոր թափել** (ատել, չսիրել մեկին) // **փորը թափել** (սպանել): Քիչ չեն այն դեպքերը, երբ հարանունությունը ստեղծվում է այնպիսի բազմիմաստ դարձվածքների միջև, որոնք տարբերվում են միայն հոդով, բայց նույն դարձվածքի տարբերակային ձևեր են, այսինքն՝ ունեն ընդհանուր մեկ իմաստ, սակայն իրենց մյուս իմաստներով իրարից տարբերվում են, կամ էլ հարանուն դարձվածքներից մեկը միայն մեկ իմաստ ունի և իր այդ իմաստով համապատասխանում է զուգահեռ բազմիմաստ դարձվածքի միայն մի իմաստին, սակայն մյուս իմաստների համար դառնում է հարանուն: Այսպես, **հոտ առնել // հոտն առնել** դարձվածքները նույնանում են հետևյալ իմաստներով՝

իմանալ, զգալ, սակայն առաջինն ունի նաև այլ իմաստներ՝ *գլխի ընկնել, կռահել,* իսկ երկրորդն էլ ունի իր առանձին իմաստները՝ ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի *մոտիկությունն զգալ,* նաև՝ *հետքը հայտնաբերել:* **Մեջք ծռել // մեջքը ծռել** դարձվածքները նույնանում են մի իմաստով՝ *ծանր աշխատել,* բայց *մեջքը ծռել* դարձվածքն ունի նաև մի առանձին իմաստ՝ *կորաքամակ դառնալ, կքել:* **Ձեռք գցել // ձեռքը գցել** դարձվածքները համընկնում են մի շարք իմաստներով՝ *նվաճել, տիրանալ, հայթայթել, ստանալ, վաստակել,* մինչդեռ *ձեռքը գցել* դարձվածքը ունի ևս մեկ իմաստ՝ *մեկի ձեռքը հանձնել, մատնել,* իսկ *ձեռք գցել* դարձվածքը ունի միայն իրեն բնորոշ մի իմաստ՝ *կնոջ նկատմամբ ոտնձգություն անել:* ***Խոսք տալ***՝ ա) խոստանալ, բ) համաձայնվել, պայմանավորվել // **խոսքը տալ**՝ խոսքը մեկին հանձնել, բայց երկու դարձվածքներն էլ ունեն ընդհանուր մեկ իմաստ՝ մեկին խոսելու հնարավորություն տալ: Եվ վերջապես, բացի **ը** և **ն** հոդերից՝ իմաստազատիչ նշանակություն կարող են ունենալ նաև **ս, դ** դիմորոշ հոդերը: Սակայն սրանք հիմնականում ոչ թե ամբողջությամբ են փոխում դարձվածքների իմաստները, այլ որոշ իմաստային նրբերանգներ են հաղորդում դրանց: Այսպես, **լեզուս բռնվի** (երդման խոսք է) // **լեզուդ բռնվի** (անեծք է), **լեզուս չորանա** (վախ, անհանգստություն արտահայտող երդում) // **լեզուդ չորանա** (անեծք), **ձեռքս կկտրեմ** (երդում) // **ձեռքդ կկտրեմ** (սպառնալիք), **աչքս լույս** (հաճախ ասում են հեգնանք արտահայտելու համար) // **աչքդ լույս** (շնորհավորանք) և այլն:

Բ) Վերջավորությունների միջոցով ձևավորվող հարանուն դարձվածքներ: Ժամանակակից հայերենի հարանուն դարձվածքների մեջ կարող ենք առանձնացնել այնպիսի դարձվածքներ, որոնք նման են իրենց գրությամբ և արտասանությամբ, սակայն տարբերվում են իրենց գոյական բաղադրիչների հոլովական վերջավորություններով, և դրանով պայմանավորված՝նաև իրենց նշանակություններով: Կան դեպքեր, երբ հոլովական վերջավորություններով տարբերվող դարձվածքները կարող են լինել իմաստային տարբերակներ: **Կյանքը գնալ** (տառապել, տանջվել, մաշվել) // **կյանքից գնալ** (անցնել, հեռանալ, մահանալ):

Ձեռ ու ոտ ընկնել (1.աղաչել, 2. շահագրգռվել) // **ձեռ ու ոտից ընկնել** (ուժասպառ լինել, առողջական վատ վիճակում հայտնվել): **Աչքի ընկնել** (նկատվել, առանձնանալ) // **աչքից ընկնել** (մեկի մոտ նախկին հարգանքը չունենալ) – Թալիբները աչքի են ընկնում առանձնակի դաժանությամբ: / Նա *աչքիցս ընկավ* իր մեծամտության պատճառով: **Մեջքին խփել** (մտերմիկ ժեստ է) // **մեջքից խփել** (թիկունքից հարված հասցնել) – Ձեռքով մտերմաբար մարզիկի *մեջքին* խփեց՝այդպես արտահայտելով իր գոհունակությունը:/ Նմանատիպ զույգեր են կազմում նաև հետևյալ դարձվածքները՝ **սիրտը առնել** (1. սիրաշահել, 2.մխիթարել, 3.մեղմ խոսքերով համոզել, 4.բարկությունը անցկացնել) // **սրտին առնել** (1.նեղվել, վիրավորվել, 2.իր վրա վերցնել), **աչք տալ** (մեկին հետևել, նրա քայլերին նախանձով նայել) // **աչքով տալ** (չար աչքով նայել, նախանձել), **սրտի խորքից** (խորապես, ամբողջ հոգով, մինչև սրտի խորքը) // **սրտի խորքում** (իր ներսում, ներքուստ), **սահմանից անցնել** (չափից ավելի լինել) // **սահմանն անցնել** (ընդունված կանոնները խախտել, գերազանցել):

Առավել հետաքրքիր են այն դեպքերը, երբ հարանուններ են դառնում այն դարձվածքները, որոնք հիմնականում տարբերակային միավորներ են, իրարից տարբերվում են հոգնակիակերտ **-եր, -ներ վերջավորություններ** ունենալով և չունենալով, սակայն որոշ դեպքերում այդ վերջավորությունները կարող են ունենալ իմաստատարբերակիչ նշանակություն, օրինակ՝ **աչք փակել** (անտեսել) // **աչքերը փակել** (1. քնել, 2.մեռնել), **ականջ կախել** (լսել, հնազանդվել, հավատալ) // **ականջները կախել** (բրբռ. ծույլ-ծույլ շարժվել), **ոտք մեկնել** (մեկին հավասարվելու փորձ անել, ձգտել) // **ոտքերը մեկնել** (մեռնել), **ջուրն ընկնել** (զուր անցնել, չստացվել, փչանալ) // **ջրերն ընկնել** (1.մի բանի առիթով օգտվել, 2.մեկի խելքին ընկնել):

Գ) Ածանցներով տարբերվող հարանուն դարձվածքներ: Հարանուն դարձվածքներ առաջանում են նաև այն դեպքերում, երբ դարձվածքների կազմում եղած նույն կամ նման բաղադրիչներից որևէ մեկը ունենում է որևէ ածանց, որի միջոցով էլ դրսևորվում է իմաստային տարբերակվածությունը: Խոսքը հատկապես *բայական*

դարձվածքների մասին է, որոնցում բայ – բաղադրիչներին ավելանում են բայածանցներ, որոնք հանգեցնում են դարձվածքի բոլորովին նոր իմաստի առաջացմանը: Իհարկե, հատկապես շատ են այն դարձվածքները, որոնք երկու ձևով էլ արտահայտում են միևնույն իմաստը, այսինքն՝ նման դեպքերում տեղի է ունենում սոսկ սեռերի փոփոխություն (ներգործական – կրավորական – չեզոք սեռերի անցումներ).

- **օրը սևանալ // օրը սևացնել՝** դժբախտանալ / դժբախտացնել,
- **հանգույցը լուծել // հանգույցը լուծվել՝** մի հարցի լուծում տալ / լուծում տրվել,
- **կյանքի կոչել // կյանքի կոչվել՝** կենդանություն տալ, իրականացնել / կենդանություն ստանալ, իրականացվել,
- **սիրտը կոտրել // սիրտը կոտրվել՝** վշտանալ / վշտակցել,
- **դուռ բացել // դուռ բացվել՝** մի նոր հնարավորություն տալ / հնարավորություն տրվել,
- **արյունը թափել // արյունը թափվել՝** սպանել / սպանվել,
- **աչքը վախենալ // աչքը վախեցնել՝** երկյուղել / երկյուղ ներշնչել:

Նման դարձվածքները մեծ թիվ են կազմում, բայց անպայման պետք է նկատի ունենալ, որ բոլոր դարձվածքների դեպքում չէ, որ նմանատիպ հակադրությունները սահմանափակվում են միայն սեռային փոփոխություններով: Կան դարձվածքներ, որոնց բայ-բաղադրիչների սեռային փոփոխությունները (որ դրսևորվում են ածանցների միջոցով) հանգեցնում են նաև դարձվածքների իմաստային տարբերությունների, օրինակ՝

- **իրար խառնել** (ուրիշների վիճաբանության, նաև խառնաշփոթի պատճառ դառնալ, ամեն ինչ տակնուվրա անել//**իրար խառնվել** (շփոթվել, անհանգստանալ)
- **լեզուն բռնել** (լռեցնել) // **լեզուն բռնվել** (խոսելու համարձակություն չունենալ, կաշկանդվել)

- **սիրտը բացել** (1.ներսում կուտակվածը մեկին ասել, 2.սերը արտահայտել) // **սիրտը բացվել** (1.տրամադրությունը տեղը գալ, 2.ուրախ տրամադրությամբ համակվել)
- **սիրտը ցավել** (1. տխրել, խոր ցավ զգալ, 2. կարեկցել, 3.ափսոսալ, զղջալ, 4.մեկի համար մտահոգվել, հոգ տանել // **սիրտը ցավեցնել** (1. հոգեկան ցավ պատճառել, տխրեցնել, 2.նեղացնել):
- **աչքը մտնել՝** ա) տեսանելի լինել, բ) մեկի համակրանքին արժանանալ, գ) դուրը գալ //**աչքը մտցնել՝** ա) երեսով տալ, բ) դժգոհությամբ մի բան մեկին տալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով դարձվածքային բազմիմաստությունը՝ նկատեցինք, որ լեզվի զարգացման այս փուլում էլ դարձվածքներին բնորոշ է նոր իմաստների հավելումը : Այդ նոր իմաստների հավելումը բնորոշ է հատկապես խոսակցական լեզվում հաճախակի կիրառություն ունեցող դարձվածքներին /կես մարդ դառնալ, իրար հասնել…/:

Ժամանակակից հայերենի հարանուն դարձվածքներից առանձնացրել ենք 3 հիմնական խումբ.

1. Հոդի շնորհիվ առաջացած հարանուն դարձվածքներ
2. Վերջավորությունների միջոցով աճաջացած հարանուն դարձվածքներ
3. Ածանցներով առաջացած հարանուն դարձվածքներ

Ե՛վ բազմիմաստ, և՛ հարանուն դարձվածքները գեղարվեստական գրականության և ժամանակակից մամուլի էջերում հաճախ են գործածվում և պատկերավորում են խոսքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Երևան,2000
2. Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975
3. Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Երևան, 1969
4. Մարգարյան Ալ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990